գնաց դարձեալ բազմութեամբ ուխտաւորաց և միաբանական դասուք, ուր ժողովեալ էին գործակալք դրանն. խաղաղութեամբ և ուրախութեամբ կատարեաց զՀանդէս Լուսաւորութեան, ըստ վաղեմի սովորութեան Հայոց, մխիթարելով զժողովուրդն։ Եգիպտացիք, այսինքն Գոպթիք, որք ոչ կամեցան ընդ Հայոց տօնել զՀատիկն, գաղտագողի 'ի զննին կային աստ և անդ 'ի պատուհանս և յայլ տեղիս ընդ միաբանս Յունաց՝ տեսանել թէ յո՞ր եղերին ելք իրացն. այլ մեծ արար Տէր զողորմութիւնն եւ մխիթարեաց զծառայս իւր։

Նոյնպէս և 'ի դիշերին յայնմիկ փառաւորապէս կատարեցին զտօն հրաշափառ Յարութեանն Քրիստոսի Թափորիւ, և դարձան ուրախութեամբ 'ի տեղիս իւրեանց։ Զեղեւ ինչ վէճ և կամ խռովութիւն յաւուրսս յայսոսիկ 'ի մէջ երկուց ազգաց, և ոստիկանն դրան գրով դատաւորին դարձաւ 'ի Կոստանդինուպոլիս։

Զպատմութիւն Մռազատկի, զոր աւանդեցաք 'ի կարգի գործոյս, առեալ եմք 'ի ձեռագիր գրուածոց, ուշ եղեալ նաեւ 'ի դատաստանական գիրս, և 'ի յիշատակարանէ ձեռագիր Յայսմաւուրի, զոր գրեալ է նա ինքն Հաննա վարդապետ ականատես ամենայն հանգամանօք։ Սակայն երեւի անհամաձայնութիւն բանից յերկուց կողմանց. զի յիշատակարանն աւանդէ, թէ Գրիգոր Պատրիարք առաջի եղ Յունաց զպայմանն առանձին տօնելոյ ըզՊասեքն, իսկ 'ի բանս նամակի Պատրիարքին Յունաց այնպէս երեւի, որպէս թէ ինքն ստիպեալ իցէ զՅովհաննէս Պատրիարք Բիւզանդիոյ, առնել այնպէս. եւ նորա չիցէ յանձն առեալ 'ի սկզբան, և յետոյ զիջեալ 'ի կամս նորա, ուստի ծագի տարաձայնութիւն բանից. իսկ մեք սակս չ'չփոթելոյ զվանդիրն, ամիսոիսս պահեցաք զրանս երկուց կողմանց։ Սակայն եւ այս բնական է, զի իւրաքանչիւր ոք՝ զիւրն կամի հաստատել։ Այլ զվանդիրն վաղեմի կարելի է այսպէս լուծանել. թերեւս յայնժամ Յովհաննէս Պատրիարք Բիւզանդիոյ, լուելեայն ազգ արարեալ իցէ յԵրուսաղէմ զմիտս Պատրիարքին Յունաց. և 'ի լինել բանից 'ի մէջ Գրիգորի և Փոխանորդի նոցին, առաջարկեալ է նա այնպէս. եւ նորա ընկալեալ զայն իբրեւ